ՀԻՊՈ ԹԵՐԱՊԻԱ

Նպատակ

Որպեսզի օգնել Խարբերդի մանկատանը զարգացնի հիպո-թերապիայի ծրագիրը, որը կօգնի առողջական խնդիրներով երեխաներին, որոնցից են մանկական ուղեղային կաթվածը, աուտիզմը և դաունի սինդրոմը: Այս ծրագիրը կօգնի նվազեցնել դեպրեսիան, կդարձնի երեխաներին ֆիզիկապես ավելի ակտիվ և կբարելավի նրանց կենտրոնացումն ու հաղորդակցման հմտությունները:

Գործողություններ

- Գնել հատուկ նշանակության կառք, որը կծառայի խմբակային հիպո-թերապիայի համար
- Գնել կառքի համար հատուկ թամբ, որը կմիացնի ձին կառքին

Ծրագրի նկարագրությունը

Լինելով Երևանից ընդհամենը մի քանի կիլոմետր հեռավորության վրա, Խարբերդի մանկատանը ապրում են մոտ 300 երեխա, որոնք ունեն բազմաթիվ ֆիզիկական և մտավոր խնդիրներ: Մանկատունը նաև ունի 5 ձի, որոնք վարժեցված են հիպո թերապիայի, այն է մանկական ուղեղային կաթվածով, աուտիզմով և դաունի սինդրոմով երեխաների հետ անկացնում են դասընթացներ, որի ժամանակ երեխաները անմիջականորեն շփվում են կենդանու հետ: Հիպո թերապիան ֆիզիկական, պրոֆեսիոնալ կամ խոսքի և լեզվի թերապիայի բուժում է, որը օգտագործում է ձիու շարժումները: Հիպո թերապիան բառացիորեն նշանակում է «բուժում ձիու օգնությամբ» հունարեն՝ «հիպո» բառից, որը նշանակում է ձի: Հատուկ կրթված ֆիզիկական և պրոֆեսիոնալ թերապևտները այսօրինակ բուժումն օգտագործում են այն հիվանդների համար, որոնք ունեն շարժունակության դիֆունկցիա և իմացական կարողության խնդիրներ:[1]

Այս ծրագիրը սկսվել է Խարբերդում 2012թ.-ից: Մանկատանը կան երեք թերապևտներ, որոնք հատուկ կրթված են հիպո թերապիայի համար: Նրանք աշխատում եմ մյուս 5 - 6 թերապևտների հետ՝ միասին վարելով թերապիայի դասընթացները 60 երեխայի համար: Որպեսզի թերապիան համապատասխանի յուրաքանչյուր երեխային՝ երեխաները բաժանվում են տարբեր խմբերի ըստ իրենց խնդիրների: Մանկական ուղեղային կաթվածով երեխաների համար թերապիայում կարևորագույն բաղկացուցիչ մասը այն է, որ օգնի երեխաներին ավելացնել շարժունակությունը և դառնալ ֆիզիկապես ավելի ակտիվ: Իսկ աուտիկ երեխաների համար թերապիան օգնում է լավացնել իրենց կենտրոնացումն ու ուշադրությունը:

Այս թերապիայի դասընթացները շատ օգտակար են Խարբերդի մանկատան երեխաների համար ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեբանորեն և իմացական կարողությունների առումով: Այստեղ երեխաները համեմատաբար մեկուսացված են իրենց համայնքից և ամբողջ աշխարհից: Նրանք չունեն ընտանիք, և իրենց միակ տունը մանկատունն է: Որպես որբեր, նրանք արդեն այնպիսի իրավիճակում են, որը ավելի հեշտորեն է առաջ բերում դեպրեսիայի զգացողությունները, իսկ սա արդեն կարող է ավելի խորանալ, երբ լրացուցիչ կա նաև ինչ- որ առողջական խնդիր: Այս առումով, ձիերը դարձել են «ընտանիքի» մի մասը, և երեխաները իրենց շնորհիվ կյանքի մեջ իմաստ են գտնում, թեթևացնում են իրենց ցավը գտնելով ուրախություն և հանգստության զգացողություն:

Որպեսզի զարգացնենք և բարելավենք այս ահռելի աշխատանքը, որը կատարում են թերապևտները մանկատանը, Այո-ն ֆոնդեր է հավաքում՝ հատուկ նախատեսված կառք գնելու համար, որպեսզի անցկացվեն նաև խմբակային թերապիայի դասընթացներ: Սա ոչ միայն թերապևտներին կօգնի ազդեցություն ունենալ ավելի շատ քանակով երեխաների վրա, այլ նաև սա կօգնի երեխաներին միմյանց հետ ավելի շատ շփվել թերապիայի ժամանակ: Հաղորդակցությունը երեխաների միջև շատ կարևոր է: Հաճախ նրանք անհաշտության մեջ են ընկնում թերապիայի ընթացքում, այն պատճառով, որ ցանկանում են ավելի շուտ նստել ձիու վրա: Կառքը կօգնի, որպեսզի երեխաները միասին նստեն, ինչն էլ կնվազեցնի իրենց բացասական վերաբերմունքը միմյանց նկատմամբ, և կքաջալերի նրանց լինել ավելի ընկերական և հանդուրժող հանդեպ մեկը մյուսի:

1. http://www.childrenstheraplay.org/hippotherapy

Բյուջե

ԻՆՉ	ՔԱՆԱԿ	Մ. ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Կառք	1	$3,000 + 33% tax*	$3,990
Հատուկ թամբ	1	$168	$168
Տրանսպորտային ծախսեր	1	$105	$105

**Ըստ ՀՀ եկամտահարկի օրենքի 10(6 կետի), ելնելով մեր պայմանագրից մենք որպես գնորդ պետք է վճարենք եկամտահարկը կառքը պատրաստողի փոխարեն*

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ **$4,263**